

Ա.Գ.ԱԹԱՆԻՆՎԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՏԸ
ԸՍՏ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՏՎՅԱԼՆԵՐԻ

Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Ազաթանդեղոսի բազմալեզու խմբագրությունների էությունը պարզաբանելու հարցում մեզ կարող են օգնել մի կողմից Ազաթանդեղոսի «Պատմության» նյութերի հետքերը հայ պատմագրության էջերում, իսկ մյուս կողմից Ազաթանդեղոսի նորանոր խմբագրությունները, որոնք հայտնաբերվեցին վերջին տարիներին:

Ազաթանդեղոսի «Պատմության» նյութերը ամենից շատ սփռված ենք գտնում Մովսես Խորենացու «Պատմության» էջերում: Խորենացին հստակ կերպով նշում է, որ ինքը բազում տեղեկություններ է քաղել Ազաթանդեղոսից: Երա երկրորդ գրքի Կէ գլխից մինչև այդ գրքի վերջը առատորեն ցրված են Ազաթանդեղոսից քաղած տեղեկությունները: Հենց Կէ գլխի վերնագիրն է՝ «Եթէ որպէս Ազաթանդեղոս պատմեաց համառօտ»¹: Այս փոքրիկ գլխում նա համառոտում է Ազաթանդեղոսի գրքի առաջին հատվածը (Խոսրով և Տրդատ): Հիշելուց հետո, թե հայոց թագավոր Վաղարշին հաջորդում է Խոսրովը, ավելացնում է. «Յաղազս սորա և համատոհմիցն կարճ ի կարճոյ իմն անցանելով աչոյ քարտուղարն Տրդատայ Ազաթանդեղոս, փոքր ի շատէ պատմէ գմահն Արտաւանայ Պարսից թագաւորին և զբառնալ տէրութեանն Պարթեաց յԱրտաշէլ որդոյ Սասանայ և զնուաճելն Պարսից ընդ ձեռամբ նորա և զքինախնդիր լինել Խոսրովայ հօր Տրդատայ և ասպատակաւ հինից աւերել զաշխարհն Պարսից և Ասորեստանեայց»: Եվ այսպես մինչև վերջ Խորենացին գրեթե Ազաթանդեղոսի խոսքերն օգտագործելով՝ վերաշարադրում է նրան, ամեն առթիւ նշելով, որ Ազաթանդեղոսը խոսել է համառօտ, իսկ ինքը պատմելու է մանրամասն («Արդ՝ թէպէտ և Ազաթանդեղոս այսպէս համառօտ էանց ընդ այս, բայց ես հաւանեալ եմ ձիւ և յերկար առնել զպատմութիւն ժամանակիս այսորիկ, ճառելով ի սկզբանէն և ճշմարիտ ասացուածովք հոծ և խիտ»)²: Իրոք, իր շարադրանքի մեջ Խորենացին ավելի մանրամասն է, քան իր աղբյուրը, նա ուրիշ աղբյուրներ էլ է ունեցել այս հատվածի համար, որոնց տեղեկությունները միահյուսում է Ազաթանդեղոսի նյութերի հետ:

Մովսես Խորենացին Ազաթանդեղոսին հիշում է իր երկրորդ գրքի վեց գլուխների վերջում: Այս գլուխներից չորսի մեջ (Կէ, Զ, ԶԳ, ԶԶ) հստակ կերպով հիշում է Ազաթանդեղոսին որպէս աղբյուր (սորպէս ուսուցանէ քեզ Ազաթանդեղոս): Մյուս երկու գլուխներից մեկում (ՀԴ) նա ընթերցողին հիշեցնում է, որ այդ նյութի մասին լրացուցիչ տեղեկություններ քաղելու համար

¹ «Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց», աշխ. Ս. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, էջմիածին—Տփղիս. 1913, գիրք Բ, գլ. Կէ. էջ 202:

² Նույն տեղում:

կարող է դիմել Ազաթանգեղոսին («իսկ զմնացեալսն ի զրուցացս ուսուցանէ քնդ Ազաթանգեղոս»), իսկ մի գլխի վերջում էլ (ՀԺ), ուր խոսվում է Տրդատի զործունեության մասին (նախքան նրա թագավոր դառնալը), հիշեցնում է, որ Տրդատի թագավորության շրջանի տեղեկությունների համար կարելի է դիմել Ազաթանգեղոսին:

Այսպիսով, պատմահայրը Ազաթանգեղոսին ագրյուր է ճանաչում վերոհիշյալ չորս գլուխների և մասամբ՝ ՀԺ գլխի նյութերի համար:

Արդ, այդ չորս գլուխներից մեկի (ԿԷ) նյութը, ինչպես տեսանք, նույնությամբ գտնում ենք Ազաթանգեղոսի մեզ ծանոթ «Պատմության» մեջ: Մյուս գլուխների (Զ—Գրիգորի կնոջ մասին, ԶԳ—Կոստանդիանոս կայսեր մկրտությունը Սեղբեստրոսի ձեռքով և ԶԶ—Վրաց զարծի և Նունեի մասին) նյութերը ամբողջովին, իսկ ՀԻ (Անակի գալուստը Հայաստան և կնոջ հղիացումը) գլխի նյութերը մասամբ չկան Ազաթանգեղոսի՝ մեզ հայտնի «Պատմության» մեջ, թեև, ինչպես ասվեց, նրան են վերագրվում պատմահոր կողմից: Ահա այս գլուխներն են, որ հատկապես կարևոր են Ազաթանգեղոսի խմբագրությունների հարցի ուսումնասիրման համար:

Ազաթանգեղոսի և Մովսես Խորենացու առնչության հարցերը վաղուց են զբաղել բանասերների ուշադրությունը: Դրանք ուսումնասիրվել են Մովսես Խորենացու աղբյուրների քննարկման առթիվ և այդ մասին տարբեր կարծիքներ են հայտնվել:

Անցյալ դարի վերջերին ֆրանսիացի բանասեր Ա. Կարիերը, հատուկ բնություն առարկա դարձնելով Մովսես Խորենացու աղբյուրների հարցը, գտնում է, որ ԶԳ և ԶԶ գլուխներում, որտեղ խոսվում է Կոստանդիանոսի մկրտության և վրաց զարծի մասին, պատմահայրը օգտվել է ոչ թե Ազաթանգեղոսից, այլ Սոկրատ Սբուլաստիկոսի «Եկեղեցական պատմության» և «Սեղբեստրոսի Վարքի» հայերեն ընդարձակ և համառոտ թարգմանություններից՝ երկուսն էլ թարգմանված VII դարի երկրորդ կեսին, ինչպես նաև այլ աղբյուրներից³: Ա. Կարիերը համոզված է, որ Խորենացին վրաց զարծի մասին իր տեղեկությունները քաղել է Սոկրատի եկեղեցական պատմությունից, իսկ Խորենացու այն հավաստիացումը, թե իր աղբյուրը Ազաթանգեղոսն է, նա համարում է պատմահոր կողմից աղբյուրների բացահայտ կեղծում⁴, քանի որ Ազաթանգեղոսի մոտ Խորենացու պատմածներից ոչ մի բառ չենք գտնում:

Խորենացու կողմից Ազաթանգեղոսի տեղեկությունների օգտագործման հարցին Ա. Կարիերը անդրադառնում է նաև հայ հեթանոսական կրոնի մասին խոսելիս: Ըստ նրա՝ Հայաստանի մեհյանների մասին Խորենացու տեղեկությունների աղբյուրը կարող է լինել Ազաթանգեղոսը, թեև պատմահայրը կարող էր նաև այլ աղբյուրներ ունենալ: Իսկ այն, որ Մովսես Խորենացին հայկական աստվածների անունների (Արամազդ, Տիր, Վահագն, Անահիտ, Աստղիկ, Նանե, Միհր) հունական ձևերն է տալիս (Ջևս, Ապոլոն, Հերակլես, Արտեմիս, Ափրոդիտե, Աթենաս, Հեփեստոս), մինչդեռ Ազաթանգեղոսը միայն հայկական է հիշում, Ա. Կարիերը բացատրում է նրանով, որ Ազաթանգեղոսի նախնական խմբագրության մեջ կարող էին զույգ ձևեր լինել (հայ-հունական)⁵: Դրա մնացորդն է համարում Ազաթանգեղոսի խոսքերը. «Մեհեանն

³ A. Carrière, Nouvelles sources de Moïse de Khoren, Vienne, 1893, էջ 10—19:

⁴ Նույն տեղում, էջ 43:

⁵ A. Carrière, Les huit sanctuaires de l'Arménie payenne, Paris, 1899, էջ 24—25:

անուանեալ Աստղկան դից, սենեակ վահագնի կարգացեալ, որ է ըստ յունականին Ափրոդիտէս»⁶:

Ա. Կարիերի տեսակետը մեծ աղմուկ հանեց. բազում համակրողների կողքին եղան նաև նրա տեսակետը մերժող բանասերներ: 1897-ին Մ. Տեր-Մովսիսյանը հրատարակեց Սոկրատի «Եկեղեցական պատմության» ու նրան կից «Սեղբեստրոսի Վարքի» հայերեն թարգմանությունները, ուր առաջաբանում աշխատում է ապացուցել, որ «հորենացին չէ ճանաչել Սոկրատի Եկեղեցական պատմությունը և ոչ էլ որևէ կերպ օգտվել նրա հունարեն կամ հայերեն բնագրից»⁷: Իսկ ինչ վերաբերում է Նունեի վարքի և վրաց դարձի մասին հորենացու այն տեղեկություններին, որոնք նա Ազաթանգեղոսին է վերագրում, ապա այդ մասին Մ. Տեր-Մովսիսյանը գրում է, որ հավանաբար «Ազաթանգեղոսը ունեցել է այդպիսի մի պատմություն հունարեն և դուրս վրացերեն զրվածքներից առնված, որից օգտվել է հորենացին և որը այժմ կորած է»⁸:

Հայադետ Կոնիերերի կարծիքով հորենացու աղբյուրը ոչ թե «Սեղբեստրոսի Վարքն» է, այլ Ազաթանգեղոսի հնագույն կորած խմբագրությունը. «Այն, թե Ազաթանգեղոսի հիշյալ հատուկ գործը այս օրս չի գտնվիր, դարմանալի չերևար, նկատի առնելով, որ Ե և Ջ դարերու հայ դրականության հայիվ տասներորդ մասն այսօրս ալ պահված է»⁹:

Ավելի մանրամասն քննելով հորենացու աղբյուրների հարցը, Գ. Խալաթյանը հատուկ կանգ է առնում պատմահոր՝ Ազաթանգեղոսից քաղած տեղեկությունների վրա: Ըստ նրա՝ հորենացին շատ տեղեկություններ է քաղել Ազաթանգեղոսից, բայց կամայականորեն ավելացրել է նոր փաստեր, բոլորը վերագրելով Ազաթանգեղոսին¹⁰:

Ա. Կարիերի նման նաև Ջ. Գլխի («Ճաղագս առնելոյ կին Տրդատայ դԱշխէն և Կոստանդնի դՄաքսիմիանայ և թէ որպէս հանդիպեցաւ հաւատոց») աղբյուրը համարում է վերոհիշյալ «Սեղբեստրոսի Վարքը», թեպետ այդ գլխի վերջում պատմահայրը նշում է «որպէս համառօտ ուսուցանէ քեզ Ազաթանգեղոս»¹¹: Իսկ Ջ. Գլխի («Ճաղագս նունեի Երանելոյ Եթէ որպէս եղև պատառք փրկութեան Վրաց») հիմքում նույնպես տեսնում է Սոկրատի «Եկեղեցական պատմությունը», թեև գլխի վերջում գրված է՝ «որպէս ուսուցանէ քեզ Ազաթանգեղոս»¹²: Այս գլուխների նյութը Ազաթանգեղոսին կամ նրա որևէ կորած խմբագրության վերագրելը Գ. Խալաթյանը թյուրիմացություն է համարում¹³:

Այն դեպքերում, երբ Ազաթանգեղոսի հակիրճ տեղեկության դիմաց հորենացին ավելի ընդարձակ տվյալներ է հաղորդում, Գ. Խալաթյանը համարում

6 «Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց», էջմածին—Տփղիս. 1909, § 809, էջ 422:

7 «Սոկրատայ Սրալատիկոսի Եկեղեցական պատմութիւն», հրատարակեց Մ. Տեր-Մովսիսյան (այսուհետև՝ Սոկրատ), Վաղարշապատ, 1897, էջ ԽԻ:

8 Նունե տեղում, էջ 2Ա:

9 «Հանդես Ամսօրյա», 1902, մարտ, էջ 87:

10 Գ. Խալաթյան, «Армянские Аршакиды в Истории Армении» Мюнхен Хоренского, М., 1903, էջ 127:

11 Խորենացի, Գիրք Բ, գլ. 24, էջ 227:

12 Նունե տեղում, գլ. 22, էջ 234:

13 Գ. Խալաթյան, նշվ. աշխ., էջ 167:

է պատմաճոր կողմից հորինված լրացումներ և ոչ թե այլ աղբյուրներից քաղած փաստեր¹⁴։ Այսպես, օրինակ, Աղաթանգեղոսի հիշած Օտա նախարարը, Արտավազը¹⁵՝ խորենացու մոտ ավելի մանրամասն փաստերով են հիշված. կամ՝ Եփրատի կողմերում Տրդատի մղած կռիվների մասին խորենացին լրացուցիչ տեղեկություններ ունի¹⁶։ Ժխտելով Մ. Տեր-Մովսիսյանի և այլոց այն վարկածը, թե խորենացին կարող էր օգտագործած լինել Աղաթանգեղոսի մեղ չհասած մի խմբագրություն, Գ. Խալաթյանը պնդում է, որ այդպես մտածողները իզուր են հույս դնում Աղաթանգեղոսի պատմության մեղ չհասած մասերի վրա¹⁷։

Սակայն Աղաթանգեղոսի «Պատմության» նորահայտ խմբագրությունները (արաբերեն Վարք, հունարեն Վարք, Օքրիդայի Վարք և Քարշունի¹⁸ Վարք) ցույց տվեցին, որ Մ. Տեր-Մովսիսյանը, Կոնիբերր և ուրիշներ¹⁹ իզուր չէին ենթադրում, որ Մովսես խորենացու մոտ Աղաթանգեղոսի անունով պահպանված²⁰ բայց Աղաթանգեղոսի մեղ հասած «Պատմության» մեջ պակասող տեղեկությունները իրոք ծագում են Աղաթանգեղոսից և պատմաճոր հնարանները չեն։

1902 թ. Ն. Մաուր Սինա լեռան Ս. Կատարինե վանքի մի արաբերեն ձեռագրում հայտնաբերեց Աղաթանգեղոսի «Պատմության» մի ինքնուրույն խմբագրություն, որն ըստ նրա՝ թարգմանված է մոտավորապես IX դարում հունարենից։ Ն. Մաուր նկատում է, որ «բացասական քննադատությունը» խորենացու մոտ տեսնելով Աղաթանգեղոսին վերագրվող, բայց վերջինիս մոտ պակասող տեղեկություններ (ինչպես վրաց դարձը) և իր ժամանակի համար հակասական թվացող փաստեր, կասկածում էր պատմաճոր բարեխղճությանը²¹։ Բանն այն է, որ նորահայտ խմբագրության մեջ պահպանվել են տեղե-

¹⁴ Մենք չենք անդրադառնում խորենացու և Սերեոսի «Պատմությանը» կից Անանունի հատվածի մեջ հիշված Աղաթանգեղոսի (կեղծ Աղաթանգեղոսի) առնչությանը, որը մեր հոգևածի նյութին չի վերաբերում։ Այդ մասին տե՛ս Ա. Ֆ. Դուտշմիդի՝ խորենացու տեղեկությունների հավաստիությանը նվիրված ուսումնասիրության հայերեն թարգմանությունը՝ Կուտշմիտ գերմանացի գիտնականին խորենացույ վրա դրած դատաստանը, «Բազմավես», 1877, էջ 295—299։ Գ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես խորենացին, Երևան, 1966, էջ 103—113։

¹⁵ Աղաթանգեղոս, § 217, 860։

¹⁶ խորենացի, Կիրք Բ, գլ. 27, էջ 219։ Աղաթանգեղոսի և խորենացու առնչություններն են վերաբերում նաև սահմանաբարերի մասին պատմաճոր տեղեկությունները, որոնց գաղափարը նա բաղել է Աղաթանգեղոսից. տե՛ս Դ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 184—198։

¹⁷ Г. Халатян, նշվ. աշխ., էջ 164։

¹⁸ Քարշունի են կոչվում ասորատառ արաբերեն զրվածքները։

¹⁹ Նման ենթադրություն արել էր դեռ նախյան այս րանավեճերն սկսելը Հ. Տաշյանը. տե՛ս նրա Աղաթանգեղոս առ Գևորգայ ասորի եպիսկոպոսին, Վիեննա, 1891, էջ 156—159։

²⁰ Ինչ վերաբերում է Սասանյան Արտաշիրի իշխանության գլուխ անցնելու գրույցին, որը գտնում ենք թե՛ հունարեն Աղաթանգեղոսի առաջաբանում, թե՛ Մովսես խորենացու մոտ, ապա զա երկու պատմիչների փոխհարաբերությանը չի վերաբերում։ Նվ. Աղաթանգեղոսը, և՛ խորենացին, հավանաբար, բանավոր աղբյուրներից են օգտվել և, բացի դրանից, Արտաշիրի ապստամբության մասին պատմող հատվածը Աղաթանգեղոսի մատյանին կցվել է շատ ուշ՝ հունարենի թարգմանվելուց հետո. տե՛ս Կ. Մելիր-Օհանյան, Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները Շահնամում ու հայ մատենագրության մեջ, «Ֆիրդուսի», ժողովածու, Երևան, 1934, էջ 24։

²¹ Н. Марр, Крещение армян, грузин, абхазов и аланов Святим Григорием (арабская версия), СПб., 1905, էջ 175։

կույթյուններ հենց Կոստանդիանոսի՝ Սեղբեստրոսի ձեռքով մկրտվելու պատմության վերաբերյալ, որն այնքան վեճերի առարկա էր դարձել:

Հռոմի կայսր Կոստանդիանոսի կողմից քրիստոնեությունն ընդունելու մասին հայերեն Ազաթանգեղոսը պատմում է հետևյալը. Կոստանդիանոսը, հաղթելով իր հակառակորդներին, քանդեց մեհյանները, եկեղեցիներ կառուցեց: Նա ամեն կողմ հրովարտականեր ուղարկեց՝ ավետելով նոր հավատի հաղթանակը: Հայոց Տրդատ թագավորը, լսելով այդ մասին, Կրիզոստոմոսին հետ զնաց Հռոմ և այցելեց Կոստանդիանոս կայսրին ու Եվսեբիոս արքեպիսկոպոսին (պապին): Տրդատն ու Կոստանդիանոսը իրար պատմեցին իրենց շուրջը կատարված դեպքերի ու հրաշքների մասին²²:

Մովսես հորենացին պատմում է Կոստանդիանոսի հաղթանակը, ամուսնությունը, Տրդատի հետ բարեկամանալը: Հիշում է, որ նախքան քրիստոնեությունն ընդունելը նա իր կնոջ՝ Մաքսիմիանյի աղղցությունն տակ հալածանք էր հարուցել քրիստոնյաների դեմ, որի պատճառով հիվանդացել էր բորբոսով: Նա դիմել էր հայոց Տրդատ թագավորի օգնությանը՝ զենք ու զորք ուղարկելով, բայց անօգուտ: Վերջապես առաքյալների կողմից հրաման էր ստացել բուժվելու համար մկրտվել Սեղբեստրոս պապից (սրբի լուսամբամբ կենսատու առաքյալն էր ձեռն Սեղբեստրոսի եպիսկոպոսի Հռոմայ)²³: Այս բոլորը վերագրվում է Ազաթանգեղոսին, թեև վերջինիս մոտ նույնիսկ Սեղբեստրոսի անունը չկա: Իսկ «Սեղբեստրոսի Վարքում» դրանք ամբողջովին պատմվում են դեռ ավելի ընդարձակ²⁴: Բայց ահա, ն. Մառի կողմից հրատարակված արաբերեն Վարքում և 1946 թ. Ժ. Գարիտի լույս ընծայած հունարեն Վարքում հիշվում է Կոստանդիանոսի հիվանդության (բորբոսություն) պատմությունը և Սեղբեստրոս պապի կողմից Կոստանդիանոսի մկրտությունը: Այս բանը պատմվում է Տրդատ թագավորին Կոստանդիանոսի դրած նամակում, որը գտնվում է միայն արաբերեն և հունարեն Վարքերի մեջ: Այստեղ հայոց դարձը հիշելուց հետո ասվում է. «Մենք երկյուղածությամբ հրձվեցինք այս բանի համար, քանզի մենք ևս հնում քեզ նման էինք և ընկել էինք փորձանքի մեջ, այսինքն բորբոսությունը, որով ևս հիվանդացել էի: Այդ ժամանակ մենք հանդստացանք՝ սրբազան մկրտություն ստանալով սուրբ Սիլվեստրոս (Սեղբեստրոս) եպիսկոպոսից, քանզի նա նորոգեց ինձ մկրտությամբ: Բմ օրհնյալ մորը, տիրուհուն ու քրիստոսասերին ուղարկեցի աստծո սուրբ քաղաքը, որպեսզի պատվական օրհնյալ խաչի մի մասնիկը բերի»²⁵:

Վրաց ու աղվանից դարձի և նունեի մասին Ազաթանգեղոսը ոչինչ չի ասում, միայն ակնարկում է, որ Գրիգորի քարոզությունը տարածվեց «Ի Սատաղացուց քաղաքէն մինչև առ աշխարհաւն հաղտեաց, մինչև առ Կաղար-

²² Ազաթանգեղոս, էջ 455—464:

²³ Խորենացի, գիրք Բ, գլ. 29, էջ 226—227:

²⁴ Սիկրատ, էջ 721—740: G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange, Vatican, 1946, § 175—177.

²⁵ H. Mapp, նշվ. աշխ., էջ 140—142: Այժմ հայտնի է նաև արաբերեն Վարքի սկզբնական պահպանող հատվածը. տե՛ս Ա. Տեբ-Ղևոնդյան, Ազաթանգեղոսի արաբական խմբագրության նորահայտ ամբողջական բնագիրը, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 1, էջ 209—237:

ջօր, մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչև ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց...»²⁶

Սրա փոխարեն Մովսես Խորենացին Ազաթանգեղոսի անունով պատմում է հետևյալը. Հոփսիսիմյանց կույսերից մեկը՝ Նունեն, գալիս է Մծխեթ և ապա բուժում Միհրան թագավորի կնոջը։ Վերջինս հետաքրքրվում է, և Նունեն պատմում է այն հրաշքների մասին, որ կատարվել էին Հայոց աշխարհում։ Մի օր, որսի ժամանակ, անտառի խավարի մեջ ընկած թագավորը երկյուղով հիշում է Նունեի քարոզած աստծուն և աղոթում նրան ու փրկվում։ Վրացիք պատվական մարդկանց ուղարկում են Գրիգորի և Տրդատ թագավորի մոտ, ընդունում նոր կրոնի քարոզությունը, կործանում կուռքերը։ Դրանից հետո շատ հրաշքներ են կատարվում, իսկ սրբուհի Նունեն «քարոզեաց ի Կղարջաց սկսեալ առ դրամբք Ալանաց և Կասպից մինչև ի սահմանս Մասքթաց, որպէս ուսուցանէ բեզ Ազաթանգեղոս»²⁷։ Իրոք, այս վերջին տողերը Ազաթանգեղոսից են վերցված, սակայն նրան նախորդող պատմությունը բոլորովին չկա մեզ հասած Ազաթանգեղոսի մեջ։ Սրան հակառակ Սոկրատի «Նեկեղեցական պատմություն» մեջ հիշվում է, որ մի քրիստոնեյա գերի կին գալիս է Վրաց աշխարհ ու քարոզում քրիստոնեություն։ Վրաց թագավորը որսի ժամանակ խավար անտառում նեղ դրություն մեջ ընկնելով, աղոթքով դիմում է դերի կնոջ քարոզած աստծուն և աղափարվելով, հավատում է նրան։ Նա հրամայում է խաչեր կանգնեցնել, եկեղեցիներ կառուցել։ Վրացիք պատվիրակություն են ուղարկում Կոստանդինոս կայսեր մոտ քրիստոնեությունն ընդունելու և այլն²⁸։

Արդ, արարքերեն և հունարեն Վարքերը տալիս են վրաց դարձի որոշ մանրամասներ, որոնք Խորենացու տվյալներին ավելի մոտ են, քան Սոկրատի «Նեկեղեցական պատմություն» տեղեկությունները։ Նախ այստեղ խոսվում է ոչ միայն վրաց, այլև աղվանից քրիստոնեություն ընդունելու մասին։ Վրաց և Աղվանից թագավորները հենց սկզբից եղել են Հայաստանում և Տրդատ թագավորի հետ մկրտվել։ Գրիգոր Լուսավորիչը եպիսկոպոսներ է ուղարկում Վրաց և Աղվանից աշխարհները։ Ահա այդ հատվածը՝ ըստ արաբերեն Վարքի՝ «Իմ սուրբ Գրիգորիոսը, որ դարձել էր ամբողջ Հայաստանի կաթողիկոս, եպիսկոպոսներ պատրաստեց և նրանց ուղարկում էր Հայաստանի բոլոր կողմերը։ Վրաստան, Դուրգուկիյա երկիրը և Ալանաց երկիրը։ Նա վերցրեց մի վրացու (ջուրջանի) նրանցից, որոնք Սերաստիայից իր հետ եկել էին, որի անունն էր Իրինարսու (Իրինարոս) և նրան մետրուպոլիտ դարձրեց և ուղարկ-

²⁶ Ազաթանգեղոս, § 842, էջ 439։

²⁷ Նունենացի, դիրք Բ, գլ. 22, էջ 234։

²⁸ Սոկրատ, էջ 61—67։

²⁹ H. M a r r, նշվ. աշխ., էջ 136։ Այս նույն տեղում հունարեն Վարքը մի քիչ այլ կերպ է նկարագրում դեպքերը. «Սուրբ Գրիգորիոսը եպիսկոպոսներ և երեցներ ձեռնադրեց և ուղարկեց Մեծ Հայքի բոլոր շրջանները։ Սերաստացոց երկիրը ուղարկեց Իրինարոս անվամբ երեցին ու վանա՛որը։ Այս Իրինարոսը շատ համեստ մարդ էր և զովեյի կյանք էր վարում։ Նա քաջատեղյակ էր Սուրբ դրոց։ Քառասուն լմարտիրոսաց Նշխարների դյուտի ժամանակ Սերաստիայի եպիսկոպոսի պաշտոնն ունեցողի սարկավազն էր և խալմա արդեն լայններ էր լազերի երկիրն [ուղարկվեց] Սափրոնիոսը. սա ես երեց էր Կաղաղովկացի և սրբին հարողներից, նրան [Գրիգոր] եպիսկոպոս ձեռնադրեց և ուղարկեց։ Իսկ Աղվանք ուղարկվեց մի սրբազան մարդ՝ Իսիման, որը ծագումով Սատաղ փոքր քաղաքից էր։ Սուրբ դրոց քաջածանոթ նման շատ մարդիկ էին հարկ [Գրիգորին]»։ C. G a r t l e, Documents, § 170, տե՛ս է. Բարթիկյանի հայերեն թարգմանությունը, «Էջմիածին», 1966, Խ, § 170։

կեց, որպեսզի եպիսկոպոսապետ դառնա ամբողջ Վրաստանի համար: Սա անբասիր վարքի տեր էր, պատվական ու գիտակ կեղեցական գրքերի: Նա տիրացու էր և ականատես, երբ բացեցին քառասուն մարտիրոսների մասունքները: Նա դարդարված էր ալեհերությունից և դրա համար էլ [Գրիգորիոսը] նրան այդ աստիճանը տվեց: Նա Աբխազաց երկիրը ուղարկեց Սուֆրունին (Սուֆրունիոսին), որը Կապադովկիայի քահանաներից էր: Սա գտնվում էր սուրբ Գրիգորիոսի մոտ և նա սրան եպիսկոպոս դարձրեց և ուղարկեց: Այս-նաց երկիրը ուղարկեց Սումային (Թովմային), որն ընտրվել մարդ էր և Սաթալալուն (Սատաղացոց) փոքր քաղաքից էր: Սրանք, ովքեր եկել էին նրա հետ, գիտակ էին սուրբ գրքերին»:

Ազգաթանգեղոսի նոր հայտնաբերված խմբագրություններից հունարեն վարքը լուծեց ևս մի առեղծված՝ կապված Մովսես հորենացու և Ազգաթանգեղոսի հետ: Պատմահայրը իր երկրորդ գրքի 2 գլխում («Յայտարարութիւն սակաւութիւննդեան և վարուց Գրիգորի և որդւոցն ի թղթոյն Արտիթեայ եպիսկոպոսի, որ վասն հարցմանն Մարկոսի միայնակեցի ի Յագոռճանի») խոսում է Գրիգորի մանկության, Բուրգար պարսկի և Սոփի տիկնոջ ցուցաբերած խնամքի մասին: Վերջապես պատմում է Մարիամի հետ նրա ամուսնությունը և երկու դավաններ ունենալը: Այս գլխի վերջում նա ավելացնում է՝ «որպէս ուսուցանէ քեզ Ազգաթանգեղոս»: Այստեղ պարզ չէ, թե տվյալ գլխի նյութերի ո՞ր մասը Արտիթեսից (որին հիշում է վերնագրում) է բաղել հորենացին և որ մասը՝ Ազգաթանգեղոսից (որին հիշում է վերջում):

Գրիգորի կնոջ մասին³⁰ խոսում է հունարեն վարքը և սա արդեն կարող է հիմք համարվել պնդելու, որ հորենացու վերահիշյալ հատվածում 2 գլխի այն մասը, որ խոսվում է Գրիգորի արքունքի հասնելու և ամուսնության մասին, մինչև գլխի վերջը պատմահայրը բաղել է Ազգաթանգեղոսից:

Հունարեն վարքը հետևյալն է պատմում³¹. «Այդ միջոցին կատարվածի մասին լսեց սուրբ Գրիգորի կինը: Նա [Գրիգորից] երկու որդի ուներ՝ Արիստակես կոչվածին և Վրթանեսին: Երբ սուրբ Գրիգորը շահաձայնվեց դո՛հ մատուցել կուռքերին և բանտ նետվեց, կինը պատժի սպառնալիքի տակ իր երկու որդիներին հետ միասին փախել էր Կեսաբիա՝ ամուսնու ազգականների մոտ:

Նա ցանկացավ երկու որդիներին դաստիարակել հոր ոգով. ինքը և երեսխանները իրենց կարիքները հոգում էին նոր ձեռք բերած դրամով: Քիչ օգնություն չցուցաբերեցին նաև նրանց ազգականները, նամանավանդ, երբ լսեցին, որ [Գրիգորը] բազում շարժարանքների ենթարկվեց հանուն մեր Տեր Հիսուս Քրիստոսի:

Հետագայում իմանալով կատարվածի մասին, նա թողեց իր երեսխաններին զպրոցում և մեկ աղախնի ու երկու ծառաների հետ եկավ Վաղարշապատ քաղաքը: Հանդիպելով սուրբ այրին, հայտնեց նրան երեսխանների խոհուն լինելու և ստացած դաստիարակության մասին և թե ինչպես ինքը լսել էր սուրբ կույսերի ու [Գրիգորի] սխրագործությունները, որոնք վկայում են Քրիստոսի այցելության մասին:

³⁰ Գրիգորի կնոջ մասին երկու խոսք ասում է նաև Քարչունի վարքը. «Այն ժամանակ Գրիգորիոսը կանչեց իր կնոջը և շատ խրատեց, որ իրենք բաշվեն աշխարհից և մաքրությամբ ապրեն և նա համաձայնեց այդ բանում»։ M. van Esbroeck, Un nouveau témoin du livre d'Agathange, «Revue des Etudes Arméniennes», VIII, 1971, էջ 22:

³¹ G. Garitte, Documents, § 93—97; «էջմիածին», 1966, ը, § 93—97:

Սուրբ Գրիգորը չուզեց լինել նրա հետ, մանավանդ որ երեխաները բացակայում էին, բայց և այնպես նրա հանդեպ պետք եղած հոգատարություն ցուցաբերեց: Իսկ Տրդատ թագավորը, թագուհին և թագավորի քույրը իմա՝ Ծալով, որ Գրիգորի կինն է եկել, փութացին ողջունել նրան:

Սուրբ Գրիգորը ասաց թագավորին. «Ես հանուն Քրիստոսի՝ ճշմարիտ աստծու, արժանացա կապանքների և փրկվեցի: Նա (կինը) այլևս չի կարող ինձ հետ լինել և թող սուրբ կույսերին սպառարկի: Լինելով քրիստոնյա, թող նա փութա դեպի նրանց վկայարանները և մյուս մկրտված և կնքված ծառաների հետ փառաբանի կենդանի աստծուն: Թող նրանք այնտեղ մնան մինչև եկեղեցիների կառավարումը իր վրա վերցնող քահանայի ընտրությունը, քահանայի, որ ձեռք մկրտելու է սուրբ մկրտությունը»: Թագավորը և թագուհիները համաձայնվեցին սրբի հետ, պատվելով [Գրիգորի] սուրբ կնոջը, որի անունն էր Զուլիտտա»:

Արաբներն և հունարեն Վարբերը, ինչպես նաև 1965 թ. հրատարակված Օբրիգայի Վարբը³², որպես Աղաթանգեղոսի խմբագրությունների մի ուրույն խումբ, բանասիրական շատ հարցեր լուծեցին, որոնցից մեկն է, ինչպես տեսանք. հորենացու՝ Աղաթանգեղոսին վերագրված տեղեկությունների ճշմարտացիությունը:

Այս ասպարեկում վերջին նորությունը մեզ տվեց, այսպես կոչված, Քարշունի Վարբը, որ լույս տեսավ 1971 թ.:

Բանասիրության մեջ միշտ տարակուսանք է առաջացրել և նույնիսկ շատ տարօրինակ է թվացել այն, որ Աղաթանգեղոսի պատմության մեջ չկա հայ պատմիչների կողմից հայ եկեղեցու հիմնադիր համարված Թադեոսի նույնիսկ անվան հիշատակումը: Աղաթանգեղոսի այս նորահայտ և բոլորովին ինքնուրույն խմբագրությունը (Քարշունի Վարբը) միակն է, որ տեղեկություններ ունի Հայաստանում Թադեոսի ունեցած գործունեության մասին:

Իր երկրորդ գրքի Հ' գլխում («Յաղագս զալստեանն Անակայ և լինելութեան սրբոյն Գրիգորի») Անակի և նրա կնոջ Արտաղի զաշտը զալու և այնտեղ Թադեոս առաքյալի գերեզմանի վրա դիշերելու մասին պատմելուց հետո հորենացին վերջում անորոշ ձևով ավելացնում է. «Իսկ զմնացեալսն ի զրուցացս ուսուցանէ քեզ Աղաթանգեղոս»: Այս զրույցի նպատակն է Գրիգորի անունը կապել Թադեոսի գործունեության հետ: Քարշունի Վարբը հետևյալն է պատմում. «Հայաստանում կար մի թագավոր Սանաթրուղ (Սանատրուկ) անունով՝ քրոջ որդին Ռուհայի (Նեղեսի) Աբջարի (Աբգար), որը Քրիստոսին նամակ էր դրել: Նրա մասին ասվում է, որ Դավիթ մարգարե թագավորի ցեղից էր: Ահա այս է պատճառը, որ ասվում է. թե հայոց բոլոր թագավորները Դավթի սերնդից են»³³:

Այս Սանաթրուղ թագավորի օրոք եկավ Լաբի (Լեբեոս) կոչեցյալ Տադին (Թադեոս), որը կոչվում է Ադի (Ադղայ) և նրանք բարոյեց հավատի իոսբը. իսկ Աբջար թագավորի քրոջ որդին՝ Սանաթրուղը, ընդունեց նրան:

³² G. Garitte, La Vie grecque inédite de Saint Grégoire d'Armenie, Analecta Bollandiana, t. 83, f. 3-4, Bruxelles, 1965.

³³ Այս տեղեկությունը կապ ունի Մովսես Խորենացու հիշած այն զրույցի հետ, թե Բագրատունիները հրեական ծագում ունեն, իսկ ըստ Կոստանդին Սիրանածնի, Վրաց Բագրատունիները Դավթի սերնդից են: Ինչպես երևում է, այս զրույցը պետք է գոյություն ունեցած լինե՛ր Հայաստանում դեռ վաղ միջնադարում:

Նոր Հայաստանի թագավորներն իմացան, հավաքվեցին եկան նրա մոտ և ասացին՝ քեզ վայել չէ, որ թողնես հայրերիդ հավատը: Նա ենթարկվեց նրանց կամքին ու վերադարձավ իր հին ամբարշտությունը:

Իսկ Ադիին բարձրացրին լկախադանյ և սուանեցին: Հավատացյալ մարդիկ նրան թաղեցին: Բավական ժամանակ անց մեռավ Սանաթրուղը: Նրանից հետո իշխեց Արթահշաշը (Արտաշես) և սա էլ մեռավ:

Ասյա նորահայտ բնագիրը պատմում է, թե ինչպես հայոց խոսքով թագավորը և պարսից Արտաշիսը պատերազմում են և վերջապես պարսից արքան Հայաստան է ուղարկում ղավադիր Անուկին: «Նրա հասավ մի քաղաք, զորքը զաշտում հանգստացավ, իսկ ինքը (Անուկը) բարձրացավ այն բլուրը, որի վրա Ադի (Ադդայ) առաքյալը [նահատակության] պսակն էր ընդունել և այդ դիշեր այնտեղ քնեց իր կնոջ հետ: Սա նրանից հղիացավ այն Ղրիդուրիոսին (Գրիգորիոս), որն ամբողջ Հայաստանում քարոզեց»³⁴:

Ազաթանգեղոսի հետ հորենացու ունեցած աղերսի մասին է վկայում նաև Մանյա Այրք կոչված քարայրում Գրիգորի ձգնելու և ասյա մահվան ու թաղման պատմությունը: Ազաթանգեղոսը սոսկ հիշում է, որ Գրիգորը ձգնեց Վիշյալ քարայրում³⁵, սակայն հորենացին պատմում է, որ նա այնտեղ վախճանվեց, և հովիվները, որոնք չգիտեին նրա ինքնությունը, թաղեցին նրան: Որոշ ժամանակ անց տեսիլք երևաց Գառնիկ անունով մի ձգնավորի, որը գնաց բերեց նրա նշխարները և թաղեց Թորդան գյուղում³⁶:

Բանն այն է, որ այս բոլորը գտնում ենք նաև Քարշունի Վարքում: Գրիգորի մահվանից հետո հովիվները նրան թաղեցին, ասյա Զենոն կայսեր ժամանակ Ամրա (Գառնիկ) անունով մի ձգնավորի տեսիլքի միջոցով հայտնվեց, որ գնա Գարանաղի ու թաղի Գրիգորին: Զգնավորը նրա նշխարները բերեց Թորդան, ուր նրա վրա տաճար կառուցվեց³⁷:

Այսպիսով, վերահիշյալ չորս օրինակները (Սեղբեստրոսի, վրաց զարձի, Գրիգորի կնոջ և Թաղեոսի մասին) ականբերեն ցույց են տալիս, որ Մովսես հորենացու մոտ Ազաթանգեղոսին վերագրված տվյալները իրոք եղել են նրա հին խմբագրության մեջ, որը մեզ չի հասել, բայց իր ժամանակին պատմահայրը տեսել ու տեղեկություններ է բաղել դրանից:

Հորենացին տեսել և օգտագործել է թե՛ մեզ հասած, թե՛ կորած խմբագրությունները: Ապացուցելու համար, որ նա տեսել է մեզ հասած խմբագրությունը, բավական է հիշել, որ նա բառացի մեջբերում է անում նրանից³⁸:

Ազաթանգեղոսի Վարք կոչված չորս խմբագրությունները, ինչպես նաև Մովսես հորենացու և այլոց մոտ հին Ազաթանգեղոսից պահպանված հետքերը հնարավորություն են տալիս ավելի պարզ խոսելու V դարում Ազաթանգեղոսի ունեցած խմբագրությունների մասին:

³⁴ M. van Esbroeck. Un nouveau témoin. § 1—8.

³⁵ Ազաթանգեղոս, § 861, էջ 452.

³⁶ հորենացի, գիրք Բ, գլ. 66.

³⁷ M. van Esbroeck. Un nouveau témoin, § 293—299.

³⁸ Արտաշիս արքան ասում է Անուկ Պարթևին. «Զրույն պատուական զձեր սեպհական Պահլան, գայն անդրէն ի ձեզ դարձուցից և զքեզ թագաւ փառաւորեցից», որը գրեթե նույնությամբ ընդգրկնակությունն է Ազաթանգեղոսի խոսքերի. «Զքնութիւն Պարթևական, զձեր սեփական Պահլան ի ձեզ դարձուցից, և քեզ թագ եղիալ փառաւորեցից» (հորենացի, Բ, գլ. 4է, էջ 203: Ազաթանգեղոս, § 26, էջ 20):

Մեր դարի սկզբին Ն. Սաուր առաջարկել էր Ազաթանգեղոսի խմբագրությունների հետևյալ պատկերը³⁹։

Առաջին խմբագրությունը կազմվել է Մեսրոպ Մաշտոցի ձեռքով։ Սու հավանաբար թարգմանվել էր հունարենի և նրանից օգտվել է Գևորգ Ասորին 714 թ.։

Երկրորդ խմբագրությունը կազմվել է քաղկեդոնականների ձեռքով՝ Տալքի միջավայրում։ Սա թարգմանվել է հունարենի և արաբերենի։

Երրորդ խմբագրությունը կազմվել է VIII դարում ազգային եկեղեցուն հավատարիմ մնացածների շրջանում։

Ն. Աղոնցը նույն պատկերն է տալիս փոքր տարբերությամբ⁴⁰։

Առաջին խմբագրությունը կազմել է Կորյունը, որը հեղինակն է երկու կա-
րևոր կենսագրությունների՝ Վարք Մաշտոցի և Վարք Գրիգորի։

Երկրորդ խմբագրությունը կազմել է VI—VII դդ. սահմանադրված Եզնակ երեցը, որի առունը հիշված է Ազաթանգեղոսի՝ Փարիզի ազգային դրաղարա-
նում գտնվող ձեռագրում։

Երրորդ խմբագրությունը VIII դարի կանոնական խմբագրություն է։

Եթե մի կողմ թողնենք այս ամբողջի մեջ խմբագրությունների ժամանակի հարցը, որը վիճելի է, ապա հետաքրքրական է այն, որ մեղ հասած կանոնա-
կան խմբագրությանը (որը V դարի խմբագրություն է և ոչ թե VIII դարի) նախորդել է մեկ այլ՝ մեղ չհասած խմբագրություն, որը թեև կորել է, բայց, ինչպես տեսանք, հետքեր է թողել։

Այժմ կարելի է արդեն պնդել, որ V դարում գոյություն է ունեցել Ազա-
թանգեղոսի երկու խմբագրություն⁴¹։ Դարի առաջին կեսում կազմավորվել է
այն հին խմբագրությունը, որը ինչ-ինչ պատճառներով դուրս է մղվել ասպա-
րեզից։ Հաղթել է դարի կեսերին կազմավորվածը, որը Ն. Մառի և Ն. Աղոնցի
արտահայտությամբ՝ կարելի է իրոք համարել ազգային եկեղեցու խմբագրու-
թյուն։

Այսպիսով, հաստատվում է Մովսես Խորենացու՝ Ազաթանգեղոսից օգտվե-
լու տեղեկությունների հավաստիությունը։ Ինչքան երկար վեճեր են եղել
Խորենացու ժամանակի մասին, նույնքան էլ քննադատները դատավետել են
պատմահորը, որպես աղբյուրները հորինողի և նույնիսկ կեղծարարի։ Ինչպես
գիտենք, քննադատության ալիքը բարձրացավ անցյալ դարի վերջերին և մեր
դարի սկզբներին, որից հետո սկսվեց մի շրջան, երբ նոր տվյալների հիման
վրա ժխտվում էին պատմահոր ժամանակի և հավաստիության մասին «բա-
ցասական քննադատության» հայտնած փաստարկները։ Ազաթանգեղոսի Վարք
կոչված նորահայտ շուրս խմբագրությունների (հունարեն, արաբերեն, Օքրի-
դայի և Քարշունի) թարմ տվյալները հնարավորություն են տալիս պնդելու,
թե պարտադիր չէր, որ Խորենացին օգտված լիներ միայն «Սեղբեստրոսի Վար-
քից» և Սոկրատի «Եկեղեցական պատմությունից», բանի որ, ինչպես տեսանք,
Սեղբեստրոսի ձեռքով Կոստանդիանոսի մկրտվելու և վրաց դարձի մասին,
ինչպես նաև այլ հարցերի վերաբերյալ, բավական տեղեկություններ կան
հենց վերոհիշյալ նոր խմբագրությունների մեջ։

39 Н. Марр. *ibid.* աշխ., էջ 182։

40 Н. Адоп. Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, էջ 341—342, ծան. 1։

41 Սրանց ամեն մեկից ծագել են բազմաթիվ և բազմալիզու խմբագրություններ։

Մովսես Խորենացու «Պատմությունը» մեկն է այն աղբյուրներից, որոնց միջոցով պարզվում է Աղաթանգեղոսի խմբագրությունների էությունը, սակայն նա բացառիկ է այն առումով, որ տալիս է Աղաթանգեղոսի հին (կորած) խմբագրության բովանդակության մի բնդհանուր ուրվագիծ:

ВОПРОС РЕДАКЦИИ АГАТАНГЕЛОСА (АГАФАНГЕЛА) ПО ДАННЫМ ХОРЕНАЦИ

А. Н. ТЕР-ГЕВОНДЯН

(Резюме)

У Мовсеса Хоренаци имеется целый ряд сведений, источником которых он считает «Историю» Агафангела. Однако значительная часть упомянутых сведений отсутствует в дошедшей до нас редакции книги Агафангела. В конце XIX и начале XX вв. большинство исследователей (А. Каррьер, Г. Халатянц и др.) считали, что в этих случаях Мовсес Хоренаци произвольно относился к своим источникам и сомневались в достоверности его сведений.

Новооткрытые редакции «Истории», так называемые «Арабское житие», «Греческое житие», «Охридское житие» и «Житие Каршунни», подтверждают данные Хоренаци: они содержат все те сведения, которые Хоренаци приписывает Агафангелу, но которые отсутствуют в дошедшей до нас редакции.

«История» Агафангела имела две редакции—старая, не дошедшая до нас, составлена в первой половине V в., а новая, нам известная,—в середине V в.